ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

11.11.2013 18:22

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում է ունեցել Արցախի փաստաբանների հետ: Արա Զոհրաբյանը ներկայացրել պալատի կառուցվածքը, անդամների թիվը, պալատի կազմում գործող ստորաբաժանումները և նրանց գործառույթները:

Ըստ Արա Զոհրաբյանի, այցը ճանաչողական է և հետապնդում է երկու հայկական հանրապետությունների փաստաբանների միջև առաջացած խնդիրների համատեղ լուծման ճանապարհների որոնումը: Հայաստանի փաստաբանների պալատի նախագահը ամփոփել է ավելի վաղ տեղի ունեցած հանդիպումները Նախագահ Բակո Սահակյանի, վարչապետ Արա Հարությունյանի, Արդարադատության նախարար Արարատ Դանիելյանի և Գերագույն դատարանի նախագահ Նարինե Նարիմանյանի հետ: Արա Զոհրաբյանը նշել է, որ վարչապետի հետ, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է փաստաբանների պալատի շենքային պայմանների բարելավման խնդիրը, որը Արա Հարությունյանը խոստացել է լուծել: Սա, ըստ Արա Զոհրաբյանի, կհանգեցնի Արցախի փաստաբանների պալատի արդյունավետ աշխատանքին: ‘Փաստաբաններին հարգում են իրենց վարքագծով՝ այսինքն գնահատվում է փաստաբանի վատ կամ լավ աշխատանքը: Այդ տեսակետից ցանկանում ենք Հայաստանի փաստաբանների հաջողված փորձը փոխանցել ձեզ, որպեսզի հնարավոր լինի ունենալ լավ փաստաբանական ինստիտուտ’,-նշել է Արա Զոհրաբյանը, ով սեփական փորձով ներկայացրել է հանրության մեջ փաստաբանի՝ որպես միջնորդ ներկայանալու կարծրատիպը կոտրելուն ուղղված աշխատանքները: ‘Փաստաբանի ընկալումը պետք է լինի որպես հասարակության կողմից բարձր իրավագիտակցություն ունեցող անձի, որն իր գիտելիքների միջոցով է իրավական օգնություն ցույց տալիս, այլ ոչ թե հանդիսանում է միջնորդ’,- արձանագրել է փաստաբանների պալատի նախագահը՝ հայտնելով, այդ ճանապարհով որոշ փաստաբաններ մի քանի տարի զրկված են եղել փաստաբանական ծառայություններ մատուցելուց, սակայն այժմ այդ կարծրատիպը Հայաստանում որոշակի առումով կոտրվել է: Հղում տալով ‘փաստաբանի վարքագծի կանոնագրքին’՝ Արա Զոհրաբյանը հայտնել է նաև, որ այն փաստաբանը, ով

վստահորդի հետ պայմանագրում նշում է, որ ‘գործը երաշխավորված է’ զրկվում է փաստաբանի արտոնագրից:
Արա Զոհրաբյանը Արցախում փաստաբանների գիտելիքի բարձրացման նպատակով ներկայացրել է հեռավար կրթության ծրագիրն իրականացնելու ցանկությունը: ՓՊ նախագահը հայտնել է նաև, որ նախատեսում են զորամասերում զինվորների համարդասընթացներ կազմակերպել ‘Զինվորի իրավունքները և պարտականությունները’ և ‘փաստաբանիդերը և նշանակությունը’ թեմաներով: Զորամասերում իրականացվող իրավագիտակցության բարձրացմանն ուղղված այս ծրագրի ընթացքում պետք է ներգրավեն նաև Արցախի փաստաբանները: Ավարտին՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը խոստացել է կայքի նախագիծ նվիրել Լեռնային Ղարաբաղի փաստաբանների պալատին, իսկ Փաստաբանական դպրոցի և պալատի անունից ԼՂՀ փաստաբանների պալատին հանձնել է համակարգիչ:
***
Նոյեմբերի 11-ին տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում ամփոփելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած այցելությունը Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հանձնարարականներ է տվել համապատասխան ստորաբաժանումներին բոլոր պայմանավորվածությունների ուղղություններով աշխատանքներ ծավալել և պարբերաբար զեկուցել դրանց ընթացքի մասին:

Նախորդ նորությունը: ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

Հաջորդ նորությունը: ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ

07.11.2013ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

18.11.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ՖՐԱՆՍԻԱ

ՆԱԽԱԳԱՀԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })